**յան 100-ամյակի առիթով: Կոմիտաս վարդապետ ինքն ալ մինակը, այլն մը կհանդիսանա մեր մշակույթի պատմության մեջ, իբրև մեր ազգի լույսի փառքերեն մեկը: Թող հավետ անմոռաց մնա իր հիշատակը, միշտ խնկելի թե՛ երկնքի մեջ, թե՛ այստեղ հայոց աշխարհի մեջ: Թող անոր երաժշտական հանճարը միշտ առաջնորդող ոգի մնա մեր բոլոր երաժիշտներուն այսօր և վաղը և հավիտյան:**

**Արդ, կհրավիրենք զձեզ բոլորդ որ խոնարհած սրտերով և խորունկ հարգանքով և երախտագիտությամբ աղոթեք մեծ վարդապետի, մեծ արվեստագետի հոգույն խաղաղության և լուսավորության համար. ամեն:**

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ **Կոմիտաս վարդապետի** ծննդյան 100-ամյակի:

## ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

**Կիրակի, հոկտեմբերի 12-ին,** երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, մեծ հանդիսավորությամբ նշվեց Մայր Աթոռում սրբազան ավանդույթ դարձած հայ մշակույթի տոնը:

Հանդիսությանը ներկա էին Կ. Պոլսի հայոց պատրիարք տ. Շնորհք արքեպ. Գալստյանը, թեմերի հոգևորական և աշխարհական այն բոլոր հրավիրված ներկայացուցիչները, որոնք ժամանել էին ս. Էջմիածին՝ մասնակցելու մեռոնօրհնության և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի տոնակատարություններին: Հանդիսությանը ներկա էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, հայ մշակույթի բազմավաստակ գիտնականներ, մտավորականներ, արվեստի ու մշակույթի գործիչներ և բազմաթիվ հրավիրյալներ:

Ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

Հանդիսությունը ներածական խոսքով բացում է Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ գեր. **տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:** Սրբազանը պատմական մի հետադարձ հայացքով անցնում է հայ մշակույթի փառքի դարավոր ճանապարհով և նշում, որ հայ ժողովրդի կազմավորման այգաբացն իսկ սկսվում է ազատությամբ և լուսավորությամբ: Ապա վեր է հանում ս. Մաշտոցի, ս. Սահակի և մյուս թարգմանիչ վարդապետների մեծ ու անմահ գործը, որով հիմք դրվեց հայ մշակույթին:

Այնուհետև սրբազան հայրը խոսում է հետագա դարերի հայ մշակույթի զարգացման փառավոր էջերի մասին և շեշտում, որ չնայած հայ ազգի պատմական ուղին տառապալից է եղել, չափազանց դառը, այնուամենայնիվ նա ժամանակ է գտել ստեղծագործելու, կառուցելու և զարգացնելու իր մշակույթը:

Ապա սրբազանը խոսքը տալիս է հանդիսության գլխավոր բանախոսին՝ Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի ավագ գիտական աշխատող և բանասիրական գիտությունների դոկտոր **Աստուր Մնացականյանին,** որը հանդես է գալիս հետևյալ բովանդակալից զեկուցումով.

«Վեհափառ Հայրապետ, գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր, հարգելի կա-

ռավարության ներկայացուցիչներ, սփյուռքից եկած սրտի և զգացմունքների եղբայրներ, քույրեր, մայր հայրենիքի զավակներ, թույլ տվեք համազգային, հին ու մեծ մշակութային այս հանդիսակատարությանը նվիրված մեր խոսքն սկսելուց առաջ, մտովին, այստեղ ներկա զգալ բոլոր հայ զանգվածներին, որոնք գտնվում են թե մայր երկրում և թե նրա սահմաններից դուրս, որովհետև հայ մշակույթի, հայ գրի և դպրության, հայ Թարգմանչաց այս տոնը՝ բոլորիս է պատկանում: Թույլ տվեք, դարձյալ մտովին, այստեղ ներկա զգալ ի դեմս մեր մեծագործ Հայրապետի՝ հայոց բոլոր հայրապետներին, Գրիգոր Լուսավորչից մինչև Ներսես Աշտարակեցի և իր հաջորդները, ի դեմս որդիապարգև վեհամոր՝ բոլոր վեհամայրերին, արքայամայրերին ու մայրերին. ի դեմս բոլորիս՝ հայոց բոլոր սերունդներին, հայրենիքի ու նրա մշակույթի համար ընկած բոլոր նահատակներին՝ Հայկ նախնու ճակատագրական ճակատամարտից մինչև Վարդանանք ու Դավիթ-բեկ, մինչև Մեծ եղեռնի անմեղ նահատակները, մինչև Սարդարաբադի հերոսական գոյամարտը ու մինչև Հայրենական մեծ պատերազմի զոհերը:

Թույլ տվեք այսպե՛ս զգալ, որովհետև իրականում հայ մշակույթի տոնն ու հայ ժողովուրդ ըմբռնումը անբաժանելի են, ձույլ ու միասնական՝ անկախ ֆիզիկական ու երևութային բոլոր պարագաներից: Թույլ տվեք այսպես զգալ նաև այն պատճառով, որպեսզի այս գիտակցությունը հայության բոլոր զանգվածներին առավել սերտորեն շղթայի մայր հայրենիքին, նրա հավերժական Արարատին ու Արագածին, Էջմիածնին ու Մատենադարանին, Երևանին ու Բյուրականին:

Թանկագին բարեկամներ, մեծ երջանկություն է՝ անարկու հարվածներից, բնաջնջող վայրագություններից հետո, ունենալ նորից սեփական հայրենիք, փոքր, բայց հզոր, և մեր մեծ բանաստեղծի շուրթերով բացականչել.

Թեպետ և բախտը մեզ շատ հարվածեց,
Երկար դարերով, անհեղ հարվածով,
Թեպետ և էսպես ցրվեց, տարածեց,
Ջրգեց հողեհող, փլոեց ծուլեծով,
Վկա՜ է սակայն բովանդակ երկիր,
Որ մենք կարևեր ապրում ենք կրկին,
Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր՝
Կենդանի է դեռ հայության ոգին...

Այս սուրբ և սարսռագին պահին հաճելի է հիշել և մանավանդ զգալ, որ մեզանից շուրջ 1550 տարի առաջ, այստեղ, Արարատյան դաշտի այս կենտրոնում, Արարատի և Արագածի ծնողական հայացքի տակ, իրենց որդիական, բայց գերմարդկային ու աստվածային պարտքն են կատարել Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և Վռամշապուհ արքան: Եվ եթե մենք ապրում ենք այսօր որպես առաջավոր մարդկության բազմաչարչար, բայց և բազմահանճար մի հատված, ապա առաջին հերթին պարտական ենք այն միասնությանը, որով այստեղ, մեր շնչած ու շրջած վայրերում ծնվեց սեփական գրի ու դպրության անզուգական գաղափարը և որով ավելի քան իմաստնացավ Ծաղկաթի շարականի փայփայած միտքը.

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա...»:

Այս անգամ այդ լույսը ցոլանում էր օտար ափերից հայրենիք վերադարձող Մեսրոպ Մաշտոցի հայաշունչ այն անդրանիկ մագաղաթներից, որոնց վրա առաջին անգամ դրոշմվել էին հայոց այբուբենն ու Աստվածաշնչից ար-

ված թարգմանության փորձը. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...»: Դա մի նոր ճանապարհ և գոյատևման մի նոր ընթացք էր հնամեծ հայ ժողովրդի համար: Եվ այդ ճանապարհն էր, որ փրկեց մեզ՝ առաջնորդելով մինչև այս լուսավոր ափերը, խոստանալով հավերժություն:

Տոնն այս, որի համար խմբված ենք այսօր, սոսկ քրիստոնյա դարերին չի պատկանում, այն պատկանում է նաև մեր հեթանոս նախնիներին, Հայկյան բոլոր սերունդներին, Արամներին, Արաներին, Արտաշեսներին, Տիգրաններին՝ ընդհուպ մինչև Տրդատ և նրանց աշխարհազդու բանակներին, արեվապաշտ ռամիկներին ու քուրմերին, որոնք հզորացրին մեր հայրենիքն ու ազգային ոգին և պարարտ հող պատրաստեցին առաջավոր մի նոր կրոնի՝ քրիստոնեության համար: Այդ նրանք են, որ մեզանից առաջ, այստեղ, Էջմիածնի տաճարի տեղում, իրենց սրբազան տաճարն են կառուցել և դեպի երկինք խնկարկել հայ մշակույթի անմար բոցն ու ծուխը: Եվ եթե Դրիգոր Լուսավորիչը, այդ մեծ հանճարը, այստեղ հեթանոսական հիմքերի վրա կառուցեց Էջմիածնի տաճարը, ապա դա արեց, հիշտ է, հին կրոնն իսպառ խլացնելու, բայց և հին ու նոր մշակույթի համահայկական, համազգային երկու խոշոր հատվածները մշտապես միմյանց հանգուցելու, շղթայելու համար: Այստեղ է նաև նրա դեռևս լրիվ չգնահատված մեծության գաղտնիքը: Բնականաբար, հենց այստեղ էլ ճառագեց հայ գրի և դպրության ազգապահպան լույսը և հենց այդ տաճարի հովանու տակ էլ բացվեց հայոց առաջին դպրոցը: Հայ ժողովրդի փրկության լծակի հենման կետը, այս առումով, Էջմիածնը եղավ՝ մաշտոցյան գյուտով: Այդտեղից էր, որ գրավոր կյանքով ապրելու նոր դարաշրջանն իր թևերը փռեց ոչ միայն պատմական Հայաստանի բոլոր բնակավայրերի վրա, այլև հարևան երկրների՝ Վրաց և Աղվանից, հասնելով մինչև հեփթաղների հյուսիսային սահմանները, որպեսզի գրավոր դպրության ոգին մի նոր, երկաթակոփ դարպաս հանդիսանար Կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքներում՝ ավազակաբարո և ասպատակող ցեղերի առջև:

Այո՛, մաշտոցյան այբուբենը, հայոց դպրությունը, հայոց թարգմանչական արվեստը, հայ ժողովրդի մշակույթը՝ ավելի ամուր գտնվեցին, քան իշխանական ու արքունական բոլոր բերդերն ու բերդապարիսպները: Այցելենք մտովին Վան, Անի, Կարս, Կիլիկիա, Սյունիք, Արցախ, Ամբերդ, Սմբատբերդ... Բոլոր բերդերն ընկան, խորտակվեցին. չխորտակվեց միայն Մաշտոցաբերդը: Ինչո՞ւ. որովհետև մյուս բոլոր ամրոցները կառուցված էին նյութից, ֆիզիկական ուժով ու մարդկային էությունից դուրս: Մաշտոցը սակայն այն առաջին հայ ճարտարապետը եղավ, որ իր բերդը կառուցեց գաղափարից և ազգային ոգու ներաշխարհում: Նա քաջ գիտեր, որ բոլոր բերդերն էլ երբևէ մատչելի կդառնան թշնամուն, բացի այն բերդից, որը գտնվում է հոգիների աշխարհում, զգացմունքային սարսուռներում, արյան բաղադրանքում և ուղեղի անշոշափելի ծալքերում: Ու դրա՛ն էր, որ այնուհետև ապավինեց, ու դրանով էր, հիմնականում, որ փրկվեց հայ ժողովուրդը: «Եթե հայերը,— ասում է գերմանացի հայագետ Նոյմանը,—բոլոր այն փոթորիկների մեջ, որ 5-րդ դարից սկսած դղրդացրին Ասիան և մանավանդ Հայաստանը, կարողացան իբրև մի անկախ քրիստոնյա ազգ մնալ, պատճառը գլխավորապես ազգային լեզվի տառերի գյուտին պետք է վերագրել»: Ֆրանսիացի հայագետ Մեյեն, կարծես լրացնելով այդ միտքը, գրում է. «Կարելի է ասել, որ հայ մշակույթը սկսեց իր իսկական գոյությունը այբուբենի ստեղծումից, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից ու նրան հաջորդող գրականությունից, որոնք և հայ ժողովրդին բերեցին ինքնահանաչում»:

Այստեղից արդեն մենք դեմ առ դեմ ենք ելնում Երևանի բարձունքներից մեկի լանջին կանգնած ճարտարապետական մի ուրիշ կոթողի, հայոց մի ուրիշ սրբազան տաճարի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի առջև, որի կամարների ներքո իրենց հավերժական հանգիստն են վայելում հայ դպրության մատյանները, հայոց աշխարհի ու աշխարհի պարծանք՝ մեր ձեռագրերը: Բայց մենք Մաշտոցյան Մատենադարանի անունը տալով, իսկույն պիտի հիշենք նաև ս. Հակոբյանց, ս. Ղազարի, Վիեննայի խոշոր մատենադարանները, ինչպես և աշխարհով մեկ սփռված հայոց ձեռագրերի բոլոր մեծ ու փոքր հավաքածուները, որոնց հանրագումարն է հենց իսկական հայոց համազգային մատենադարանը: Այսպես է պահանջում իրերին նայել ոչ միայն ազգային մշակույթի գիտական ու պատմական շահը, այլև ինքը՝ այդ հոգևոր հարստության նահապետը՝ Մեսրոպ Մաշտոցը: Նրա ամենատես ու ազատախոհ հայացքի հանդեպ այդ ժառանգությունը ձգվում է, տարածվելով մինչև մեր օրերը, մինչև աշակերտական այն տետրակները, ուր առաջին անգամ անփորձ թաթիկներով գրվում են այբուբենի տառերը: Այս է իսկական մաշտոցյան ժառանգության սահմանագիծը, որ գտնվում է թանաքից չչորացած բոլոր գրիչների, մատիտների, վրձինների, տպարանային տառերի կենդանի ու շարժուն շուրթերի վրա:

Բայց խոսել այդ բոլորի մասին՝ մեկ ամփոփ ելույթի մեջ անհնարին կլիներ, ուստի թույլ տվեք սահմանափակվել Մատենադարանի հարստության մասնակի հիշատակումով, այն գիտակցությամբ, թե ազնվահատիկ ցորենի վիթխարի շեղջից առնված մեկ բուռն էլ կարող է գաղափար ստեղծել ամբողջի մասին:

Հիշել Մատենադարանը, նշանակում է՝ ամենից առաջ խոնարհվել այն բոլոր սերունդների հիշատակի առջև, որոնք, մաշտոցյան օրերից սկսած, ստեղծել են մեր անզուգական ձեռագրերը, մեղվի նման ամբարել նրանց մեջ մարդկային մտքի ու սրտի բոլոր ազնիվ արտադրանքները, փայփայել և կյանքի գնով կտակել մեզ: Չկա ձեռագիր, որի գրիչը կամ հեղինակները մտովին աչքերը հառած չլինեն դեպի գալիք սերունդները և խնդրած չլինեին ընդամենը մեկ հատիկ «ողորմյա»-ով բարի հիշել իրենց: Նրանք իրենց ծանր ու դժվարին պարտքը կատարել են սրբությամբ, աշխատենք մենք էլ չթերանալ իրագործելու այնքան թեթև, բայց և այնքան անհրաժեշտ ու մարդկային մեր պարտքը՝ նրանց հիշատակի առջև:

Այն, ինչ ստեղծվել է անցյալում որպես հայկական ձեռագրային հարստություն, ամբողջությամբ չէ, որ հասել է մեզ. դրա մեծ մասը ոչնչացել է պատերազմների, գերեվարությունների, հրկիզումների և այլ բարբարոսությունների ժամանակ: Պահպանվել է եղածի մի չնչին մասը միայն: Լոկ Մաշտոցյան Մատենադարանում այսօր պահպանվում է շուրջ 11 հազար ձեռագիր, մյուս վայրերում՝ շուրջ 15 հազար ձեռագիր. մոտավորապես 26 հազար ձեռագիր: Բայց եթե մի պահ փորձենք հաշվի առնել նաև այն քայքայված ձեռագրերը, որոնցից պահպանվել են սոսկ պատառիկ-պահպանակներ, ապա այդ թիվը կարող է կրկնապատկվել: Իսկ եթե փորձենք հաշվի առնել և այն, որ ամեն մի պահպանված ձեռագիր ունեցել է իր գաղափար-օրինակը, որից ընդօրինակել է ինքը, բայց այդ գաղափար-օրինակը մեզ չի հասել, ապա այդ կրկնակի 26 հազարը նորից կարող է կրկնապատկվել: Եթե չմոռանանք, որ միայն Սյունիքում 11-րդ դարում թշնամին այրեց 10 հազար ձեռագիր, Մաշտոցյան մի ամբողջ Մատենադարան, այն էլ հնագույն ձեռագրերը (հիշելով, որ դա հարյուրավոր դեպքերից մեկն է, ապա թերևս մի փոքրիկ գաղա-

փար կազմենք այն պատկառելի թվի մասին, որից պիտի բաղկանար Մաշտոցյան համազգային Մատենադարանը:

Սակայն այն չնչին մասը, որ հասել է մեզ, թե քանակով և թե տեսակաբար կշռով բավական է, որպեսզի հայ ժողովուրդն իր տեղն ունենա աշխարհի ամենաառաջավոր ու հին ժողովուրդների շարքում:

Փորձենք փոքր ինչ թափանցել մատենագրության մշակույթի այդ հարընտության ներսը: Այստեղ մեր առջև է բարձրանում, ամենից առաջ, Աստվածաշունչը՝ իր Հին ու Նոր Ուխտերով, որպես հայերեն առաջին անկյունաքարային թարգմանական ու սրբազան հատոր: Այդ վիթխարածավալ երկի թարգմանությունն այնքան հմտորեն կատարվեց, որ օտար մասնագետներն այն համարեցին բոլոր թարգմանությունների թագուհին: Շուրջ 30 տարի առաջ ռումին ժողովրդի խոշոր մտածող Նիկոլա Յորգան, դիմելով հայերին, հայագիտական մի նստաշրջանում, ասաց. «Դո՛ւք, որ հավաքված եք այսօր ձեր մեծ դարադարձը (այսինքն, Աստվածաշնչի թարգմանության 1500-ամյակը) տոնելու համար, գիտե՞ք, թե որքան իրավունք ունիք հպարտ ըլլալու... Ժողովուրդներ կան, որ բռնության հաղթանակը պաշտամունք ըրած են իրենց: Բայց ի՞նչ գեղեցիկ է, երբ ձերինին նման հին և մեծ ժողովուրդ մը... կը-տոնե իր հոգևոր նվաճումները: Աստվածաշունչի ձեր թարգմանությունը ասկե տասնհինգ դար առաջ, մեկն է ամենեն մեծ հոգեկան հաղթանակներեն, զորս երբեէ ժողովուրդ մը կրնա տարած ըլլալ պատմության մեջ»:

Աստվածաշնչի թարգմանությանը հայ իրականության մեջ հաջորդեցին ուրիշ գործեր: Եվ հայկական թարգմանական արվեստը աստիճանաբար իր գիրկն առավ մարդկության լավագույն խոհերի ու զգացմունքների ընտիր մարգարիտները՝ հունական փիլիսոփայությունից մինչև հնդկական «Յոթ իմաստասերները», ասորեստանյան «Խիկարից» մինչև արաբական «Հազար ու մի գիշերները»: Դրա շնորհիվ հայ ստեղծագործ միտքը մի կողմից մշակեց համաշխարհային առաջավոր գիծ ու ճաշակ, իսկ մյուս կողմից՝ եղբայրության կամուրջ նետեց դեպի աշխարհի բոլոր ժողովուրդների սրտերը: Դրանք մաշտոցյան կամուրջներ են:

Հայոց մատենագրության մյուս խոշոր հարստությունը հայ պատմագրությունն է՝ սկսած Ագաթանգեղոսից, Փավստոսից, Եղիշեից, Մովսես Խորենացուց և վերջացրած նրանց բոլոր հաջորդներով, որոնք մոռացությունից փրկեցին ոչ միայն քրիստոնյա դարերի հայոց պատմությունը, այլև հզոր լուսարձակներ ուղղեցին դեպի հեռավոր դարերի խորքը, ընդհուպ մինչև Արա Գեղեցիկ ու Շամիրամ, Արամ և Հայկ Նահապետ: Նրանց երկերում պատկերված Վարդան Մամիկոնյաններն ու Գայլ Վահանները թաղվեցին հայրենի հողում, որպեսզի հառնեին մագաղաթներից՝ որպես հավերժական առաջնորդներ գալիքի բոլոր հայրենական ճակատամարտերի: Նրանց շնորհիվ հայ ժողովուրդը ճանաչեց իր հայրենիքի, իրավունքի և բարոյական պարտականության սահմանները:

Յուրաքանչյուր ժողովրդի մտքի խորության ստույգ չափանիշը, ամենից առաջ, նրա փիլիսոփայությունն է, վերլուծական մտքի այն արգասիքը, որի մեջ ցոլանում են բնության ու հասարակական բոլոր երևույթների օրինաչափությունները: Հայ մտքի հին ու միջնադարյան անդաստանում վիթխարի գագաթների նման կանգնած են Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը, Վահրամ Կիլիկեցին, Հովհաննես Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, որոնց իրենց մշակած ուսմունքներով ուղի և ողնաշար տվին հայ մշակույթին, որպեսզի նա անսայթաք ընթանար իր դժվարին ճանապարհը: Հպարտությամբ պիտի

նշել, որ այսօր Խորհրդային Միության ժողովուրդների փիլիսոփայության պատմությանը նվիրված հատորները սկսվում են հայ փիլիսոփաների անուններով ու գործերով:

Հայ մատենագրության մեջ մեծ տեղ են գրավում աշխարհագրությունը, տոմարը, տիեզերագիտությունը, մաթեմատիկան, բնագիտությունը և հարակից այլ բնագավառներ, որոնց խոշոր ներկայացուցիչն է 7-րդ դարի համաշխարհային տիտան Անանիա Շիրակացին: Նրան շատ մասնագետներ են գնահատել, բայց մենք կկամենայինք, որպեսզի նա հիշվեր իր տեսիլքներից մեկի համաձայն: Տեսնում էի, ասում է նա, Արեգա՞կը, որ դեպի ինձ էր գալիս, և ես ընդառաջ գնալով իմ գիրկն առա նրան: Այո՛, այսպես ավելի ճիշտ է երևում Շիրակի մեծ զավակը՝ արևը գրկին միջնադարի խավարի գիշերներում:

Հայ դպրության բազմադարյան ուղեկիցը հանդիսացան հայ մանրանկարչությունն ու որմնանկարչությունը, որոնք իրենց գույներն առնելով գորգագործությունից, խեցեգործությունից, ինչպես նաև հայրենի բնությունից ու նկարիչների երևակայությունից, Կիլիկիայում Թորոս Ռոսլին ծնեցին, Վանում՝ Ծերուն Ծաղկող, Նոր Ջուղայում՝ Հակոբ Ջուղայեցի, Մոսկովյան Կրեմլում՝ Բոգդան Սալթանյան, իսկ Շոռոթում՝ Նաղաշ Հովնաթան, որի նկարիչ որդիները, թոռներն ու ծոռները երկու հարյուր տարի շարունակ հսկում էին՝ համակովկասյան նկարչական դպրոցների վրա՝ իրենց հայեցի երևանգայնակով ու հանճարով: Ազգային այդ պարարտ հողն ու ավանդներն էին, որ հեռավոր Ղրիմում Այվազովսկի երկնեցին, իսկ մեր սերնդին պարգևեցին վրձնի կախարդ՝ Մարտիրոս Սարյան:

Հայոց ձեռագրաշխարհում խոսում է ամեն, ամե՞ն ինչ, անգամ նյազմի կաշին, փայտը, քուղը, սոսինձն ու գամը. չի խոսում սակայն ամենազգացմունքայինը, ամենանրբագույնը՝ երաժշտությունը: Մոգական գավազանով համրացել են խազերը, և նրանց մեջ՝ այնքա՞ն մեղեդիներ, այնքա՞ն դայլայլանքներ, որոնցով լցված են եղել միջնադարյան բոլոր տաճարներն ու վանքերը, հոգիներն ու սրտերը: Ու եղավ մի պահ, որ նրանք հասկանալի դարձան Էջմիածնի սան և բոլոր ժամանակների ուսուցիչ անմահ Կոմիտասին. բայց նա էլ համրացավ... Թուրքական ահազարհուր նախճիրում կործանվեց բնական այդ տաճարը՝ լցված համազգային բոլոր նվագներով. ավերակվեց այդ կենդանի «Երգ երգոցը», տիեզերային աքանչելի հյուսվածքը, որպեսզի անէանար և ոգեղինացած՝ հսկեր գալիք սերունդների հավերժական համանվագը: Որքան ճիշտ է ընտրել այդ երևույթի անընդգրկելի ոգին՝ բանաստեղծ Պարույր Սևակը.

Դու՝ սրբազան մի ավազան,
Որ մեր հոգին սխտահանեց.
Դու՝ բիբլիական մի գավազան,
Որ ուր դիպավ, աղբյուր հանեց.
Դու՝ մեր կարոտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարթուն
Անլռելի զանգակատուն...

Ուղիղ չորս օր առաջ լրացավ այդ վսեմ հանճարի ծննդյան 100-րդ տարին. թույլ տվեք հարյուր անգամ ծունկի գալ նրա անվան ու հիշատակի առջև:

Մատենադարանը մի կախարդական աշխարհ է, որի գանձերի պաշտում իր ուրույն տեղն ունի հայոց գրականությունը, և այդ փայլատակում են արվեստավոր խոսքի այն բոլոր երանգները, որոնք երբևէ հասու են եղել միջնադարին: Այստեղ էլ առաջինը Մաշտոցն է.

Իմ նեղության պահին օգնի՛ր ինձ, Տե՛ր,
Ինչպես՝ երբեմն Հովնանին, և ողորմյա՛.
Հանցանքներից իմ այս մաքրի՛ր ինձ, Տե՛ր,
Ինչպես՝ երբեմն մաքսավորին, և ողորմյա՛.
Նենգող լեզուներից փրկի՛ր ինձ, Տե՛ր,
Եվ արյունից ապրեցրու և ողորմյա՛...

Ահա հայոց առաջին հիմնը՝ գրավոր դպրության մեջ:

Գիրն ու դպրությունը հնարավոր դարձրին, որ 10-րդ դարի հայ իրականությունը աշխարհ հաներ համաշխարհային մեծության այնպիսի հանճար, ինչպիսին էր Գրիգոր Նարեկացին: Դեպքերի զարմանալի բերումով պետք եղավ ուղիղ հազար տարի, որպեսզի նրան ճանաչեր Եվրոպան և սքանչանար՝ ուրոնելով, բայց չգտնելով նրան զուգակից: Նարեկացուց հետո էր, որ, ըստ ամենայնի, բացվեցին գեղարվեստական լիարժեք մտածողությունը, հայոց լեզվի հարստություններն օգտագործելու մեծագույն հնարավորությունները և գալիքի շուայլաշող քնարերգության բոլոր դռները: Նրանից հետո անսպասելի չէին այլևս ոչ Ֆրիկը և ոչ էլ նույնիսկ Հովհաննես Թլկուրանցին ու Սայաթ-Նովան, որովհետև նրանց երկունքը կանխատեսված էր Գրիգոր Նարեկացու տաղերում և «Երգ երգոցի» մեկնության մեջ:

Դժվար կլիներ մեկ առ մեկ, թեկուզ և թեթևակի թվարկման եղանակով սպառել Մատենադարանի հարստությունները. ուստի թույլ տվեք հիշել նրա մեծագույն հատվածներից ևս մեկը: Խոսքը՝ եկեղեցական-ծիսական գրականության մասին է՝ մաշտոցների, շարակնոցների, ճաշոցների, կանոնագրքերի, ճառընտիրների, հայսմավուրքների, գանձարանների, որոնք իրենց բազմազանությամբ ունեին մի նպատակ՝ դաստիարակել ու պահպանել քրիստոնյա մի հայ ժողովուրդ և ամեն կերպ խոչընդոտել նրա ձուլմանը թե քրիստոնյա և թե ոչ քրիստոնյա միջավայրերում: Ոչ մի պետական օրենք, միջնադարի ու ասպատակությունների այն դժոխային պայմաններում, այդ մեծ գործը այնքան նպատակասլաց ձևով չէր կարող իրականացնել, ինչպես՝ հայոց պետականակերպարանք եկեղեցին.

Այստեղից մեր առջև խոյանում են հայոց վանքերն ու տաճարները, մատուռներն ու խաչքարերը, որոնց խոնարհված ու մամռակալած կամարների ներքո դարեր շարունակ անմար կրակի պես բոցկլտացել է ազգապահպանության անշեջ կրակը: Նրանք, ճարտարապետական այդ կոթողներն են միաժամանակ հովանի հանդիսացել հայ գրչության և ձեռագրերի ծաղկման: Դժվար է գտնել մի ձեռագիր, որը գրված չլինի «ընդ հովանեաւ» այս կամ այն վանքի, տաճարի: Դրանք, այդ կոթողները միաժամանակ հայ ժողովրդի ճարտարապետական հանճարի այն աստվածապարգև մարմնացումը հանդիսացան, որոնք իրենց աննախադեպ ու ինքնատեղծ արվեստով, անջնջելի կնիք դրին ոչ միայն լեռնոտ Կովկասի դեմքին, այլև զգալի շուք տվին բարձրաճաշակ Եվրոպայի մշակույթին:

Այսօր մենք չենք կարող մեր հոգու մեջ, մեր էության ներսում հավերժորեն կանգուն չզգալ հայ ճարտարապետության բոլոր կոթողները՝ սկսած մայր Էջմիածնից, Հաղպատ-Սանահնից, Տաթև-Գանձասարից մինչև Անիի

Մայր տաճարը, նրա հազար ու մեկ եկեղեցիները, Մշո սուրբ Կարապետն ու Դրազարկը, Աղթամարն ու Կարսի Առաքելոցը, որոնք բազմադարյան մվանոդությամբ սպասում են աղոթքի ու խնկարկման:

Թանկագին հարազատներ, մեր խոսքն ու միտքը խիստ թերի կլիներ, եթե մենք այս հանդիսավոր պահին չհիշեինք նրանց, ում կյանքի ու արյան գնով պահպանվեցին և մեզ հասան հայոց մշակույթի նշխարները: Այս առումով ցնցող տեղեկություններ են հաղորդում հատկապես ձեռագրերի հիշատակարանները և նրանց հետ կապված պատմությունները: Դրանց մեջ արտացոլված է մեր գրապաշտ նախնիների անձնուրացությունը: Նրանք ոչ թե աչքի լույսի պես են պահպանել այդ սրբությունները, այլ պարզապես կյանքի ու արյան գնով:

Մաշտոցի անվան Մատենադարանում մի ձեռագիր կա. այն գրված է Հովհաննես Որոտնեցու համալսարանի ունկնդիր Հակոբ Ուստանցու ձեռքով, այն ժամանակ, երբ Լենկթեմուրի հետապնդումներից խույս տալով, նշված համալսարանը թափառում էր լեռից լեռ և շարունակում իր ուսման ընթացքը: Դա մի մեծարժեք հատոր է՝ Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի և ուրիշների ընտիր երկերով: Ձեռագրի վերջում՝ Հակոբ Ուստանցու հիշատակարանն է՝ այդ բոլորի նկարագրությամբ: Իսկ ձեռագրի առաջին էջին՝ Հակոբ Ուստանցու ընկերներից մեկի կցկտուր նշումն է Հակոբի նահատակվելու մասին: Այդ տողի մոտ մինչև հիմա էլ սևին է տալիս չորացած արյան մի կաթիլ... Հակոբ Ուստանցու արյունն է դա...

Այսպես են ահա գրվել ու փրկվել մեր ձեռագրերը:

Հաղպատ-Սանահնի շրջակայքում մի ձոր կա, իսկ այնտեղ՝ մի մոռացված սրբավայր՝ Երեք խաչ անունով: Ովքե՞ր են թաղված այդ խաչքարերի տակ. երեք քահանա՝ իրենց դպիրներով: Մոտեցող թշնամու վտանգն զգալով, նրանք քարայրների մեջ են թաքցնում վանքի սրբությունները ու ձեռագրերը և վերադարձի ճանապարհին ընկնում թշնամու ձեռքը: Թշնամին ստիպում է նրանց ցույց տալ սրբությունների ու ձեռագրերի տեղը: Քահանաները ու դպիրները հրաժարվում են և նահատակվում՝ հանուն այդ սրբությունների գոյատևման:

Ահա թե ինչպես են փրկվել մեր ձեռագրերը:

Լենինականի շրջակայքում, Արփաչայի ափին, մի գյուղ կա. այնտեղ՝ մի տարեց կին՝ Բայազ անունով: Նա Արևմտյան Հայաստանից է փախել, իր հետ բերելով մի հին Ավետարան: Մատենադարանի աշխատակիցները եղան նրա մոտ և խնդրեցին, որ նա այդ ձեռագիրը հանձներ Մատենադարանին: Մերժեց: Դրամ առաջարկեցին, մերժեց. ավելի մեծ գումար խոստացան. ավելի խիստ մերժեց: Հարցրին պատճառը. լաց եղավ: Պարզվեց, որ ջարդերի ժամանակ նա տնից վերցնում է միայն այդ Ավետարանը և իր փոքր երեխային. մեկին դնում է խուրջինի (ուսապարկի) մի գրպանը, իսկ մյուսին՝ մյուս, գցում ուսը և փախչում: Ճանապարհին երբ տեսնում է, որ թուրքերը մոտենում են, և ինքն էլ արդեն հոգնած է լինում, ստիպված է լինում բեռը թեթևացնել: Ո՞րը թողնել, ո՞րը փրկել. պապենական սրբությունը, թե՝ երեխան: Մտածում է, որ երեխան գոնե ոտքեր ունի և կարող է փախչել. ուստի երեխային դնում է մոտակա կանաչ արտի մեջ ու ասում՝ «փախիր», իսկ ինքը Ավետարանը շալակած փախչում է ճանապարհով...

Այսպես են ահա փրկվել հայոց ձեռագրերը:

Կկամենայինք սակայն այս տխուր պատմություններին ավելացնել նաև մի ուրիշը, որը նույնպես մեծ խորհուրդ ունի: Ո՞վ եղբայրներ, ասում է մի

գրիչ, բարի հիշեցեք «և զդստերսն իմ՝ զնորաբողբոջ զԽանիրեկին և զՀռիփսիմին, որ ի սկսանել գրոցս՝ զմին ծնաւ և յաւարտելն՝ զմիւսն»:

Նաև այսպես է եղել, երբ մեկ ընդ մեջ ծնվել են գրքերն ու երեխաները: Եվ իշխող օրինաչափությունն այս է եղել՝ հայոց մշակույթի ծննդի և գոյատեվման դժվար ճանապարհին:

Վերևում ասվածից հասկանալի է, թե ինչու հայ մշակույթը՝ հայ ժողովրդի սրբությունն է ու գուրգուրանքի առարկան: Ով եղել է Մաշտոցի անվան Մատենադարանում, անշուշտ, նա տեսած կլինի այն հոգատար, սրտացավ, խորապես գիտակից ու պատշաճ վերաբերմունքը, որ գոյություն ունի ձեռագրերի նկատմամբ: Նույնը պիտի ասել նաև Երևանի պատմական թանգարանի, պատկերասրահի, գրական թանգարանի և այլ հաստատությունների մասին, ուր կուտակված են մեր ժողովրդի հանճարով ու արյամբ պսակված մշակութային գանձերը: Բայց սոսկ պահպանությունն ու համալրումը, որին մեծապես օգնում են մեր սփյուռքի հարազատները, շատ քիչ կլիներ՝ պատշաճը հատուցած լինելու համար: Ստեղծված են բազմաթիվ գիտա-հետազոտական հաստատություններ՝ այդ բոլորը քննելու, ուսումնասիրելու և հրատարակելու: Հիշենք Հին ձեռագրերի ինստիտուտը (Մատենադարան), գիտությունների ակադեմիայի գրականության, պատմության, արվեստի, փիլիսոփայության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության և այլ ինստիտուտները, պետական համալսարանը, մանկավարժական ինստիտուտը, հնությունների պահպանության մարմինները և շատ ուրիշ հաստատություններ, որոնց հրատարակած պատմական արժեքավոր հատորներից կարելի է մի ամբողջ գրադարան կազմել:

Հպարտությամբ պիտի հիշել Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի, Ռնթիլիասի Զմմառի, Նոր Զուղայի, ինչպես նաև աշխարհի այլ վայրերում գտնվող հայոց մեծ ու փոքր մատենադարանների դերը՝ նույն համազգային վեհ ու սուրբ գործում:

Թանկագին բարեկամներ, վերջերս հայ ժողովուրդն ու ողջ աշխարհը մեծ շուքով նշեց մեր մշակույթի խոշորագույն գագաթներից մեկի՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը: Թույլ տվեք, ի հարգանս այդ հանճարի պայծառ հիշատակի, մեր խոսքն ավարտել նրա տողերով՝ նվիրված մեր ժողովրդի գոյատևման գաղափարին և նրա մեծագույն ազդակը հանդիսացող գրի և գրքի դրվատանքին.

...Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծալիք,
Որ լցրիք հայոց աշխարհքն ու սրտեր՝
Լուսավոր կյանքի սիրով երջանիկ
Ու ձրգտում տվիք—ձրգտել դեպի վեր,

Քանի որ դուք կաք, քանի կըմնաք,
Հոյակապ սյուներ հայության ոգու,
Մենք միշտ անսասան առաջ 'տի գնանք:
Ինչքան մեր ճամփան լինի անարկու:

Եվ տոն կըտոնենք էսպես խնդագին,
Եվ թող իմանա բովանդակ երկիր—
Այսրում է անմեռ հայությունը հին,
Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր»:

Գլխավոր բանախոսությունից հետո սրբազան հայրը տասնհինգ րոպե ընդմիջում է հայտարարում: Բոլորը դուրս են գալիս ճեմասրահ և հյուրասիրվում մրգերով:

Այնուհետև սկսվում է հանդիսության երկրորդ մասը և գործադրության է դրվում, հայ մշակույթի տոնակատարությանը նվիրված հանդեսի, գեղարվեստական մի ճոխ ծրագիր:

Մայր տաճարի երգչախումբը, **Խորեն Մելխանեջյանի** ղեկավարությամբ, կատարում է՝ «Բարեխոսությամբ», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական», «Քրիստոս ի մէջ», «Քեզեր, ցոլեր», «Գարուն ա» և «Էրեբունի» երգերը:

Կոմիտաս վարդապետի «Այսօր տոն է», «Ակնա օրոր», «Կաքավիկ» և «Հիլե յաման» երգերի կատարմամբ հանդես է գալիս ՀՍՍՀ վաստակավոր երգչուհի **Լուսինե Զաքարյանը**՝ դաշնամուրի նվագակցությամբ **Զուլիետա Սվասյանի,** և արժանանում ջերմ ծափահարությունների:

Այնուհետև բոլորին հաճելի անակնկալ է ստեղծում Վեհափառ Հայրապետը՝ հայտարարելով.

«Սիրելի զավակներ Մեր, այժմ ձեր առջև ելույթ պիտի ունենան երեք տաղանդավոր պատանիներ՝ 10—12 տարեկան հասակի, որոնք հանդիսանում են մեր վերածնված մայր հայրենիքի ամենափոքր, սակայն աչքի ընկնող արվեստագետներ և որոնք վառ են պահում մեր իմաստուն նախնիների՝ մեզ փոխանցած մշակույթի լուսավոր ջահը»:

Որոտընդոստ ծափերի ներքո բեմահարթակ է մտնում մանուկ երգահան և դաշնակահար **Զոհրապ Փարեմուզյանը** և իր գեղեցիկ ստեղծագործություններով ու արվեստով զմայլում ներկաներին: Նա կատարում է նաև Շոպենի «Էքսպրոմտ-ֆանտազիան»:

Ապա հանդես է գալիս փոքրիկ ջութակահար **Ռուբեն Հակոբյանը** և փայլուն կերպով կատարում Կոմիտասի «Քեզեր, ցոլեր»-ը, «Կռունկ»-ը և Շուբերտի «Մեղվիկ»-ը: Ռուբենին հաջորդում է տասնամյա տաղանդավոր դաշնակահար և երգահան **Արտեմ Ղազարյանը,** որը կատարում է իր ստեղծագործություններից, ինչպես նաև՝ Շոպենի «Պրելյուդիա»-ն, Դյուբուայի «Սկերցո»-ն և իր գեղեցիկ արվեստով հիացնում ներկաներին:

Անմահ Կոմիտասի «Անտունի», «Ծիրանի ծառ», «Արորն ու տատրակը» և «Կռունկ» երգերի փայլուն կատարմամբ հանդես է գալիս՝ բոլորի կողմից ճանաչված ու սիրված, Սովետական Միության ժողովրդական երգչուհի, պետական մրցանակի դափնեկիր **Գոհար Գասպարյանը** ու մեկ անգամ ևս իր հուզաթաթավ արվեստով գերում իր երկրպագուներին:

Համերգի վերջում հանդես է գալիս Հայաստանի պետական կամերային համույթը, գեղարվեստական ղեկավարությամբ Հայաստանի հանրապետության վաստակավոր ջութակահար **Զարեհ Սահակյանցի:** Կոմիտաս վարդապետի պատարագի չորս հատվածները, մաեստրոյի մշակմամբ, մի առանձին վեհությամբ ու խորհրդավորությամբ են հնչում ջութակի քնքուշ լարերի վրա և թափանցում հանդիսատեսի հոգու խորքը: Կոմիտասից կատարվում է նաև՝ «Գութանի երգ», «Լռովա հորովել», «Երկինքն ամպել ա» երգերը, իսկ «Ալագյազ», «Խնկի ծառ» և մի հատված Պերգոլեզիի «Տիրամայր»-ից բարձր վարպետությամբ կատարում է Անդրկովկասյան մրցույթի դափնեկիր **Էլեոնորա Մելքումյանը:**

Այնուհետև համույթը կատարում է Բոկերինիի «Մենուետը», Վիվալդիի «Գեղջկական կոնցերտ»-ը և Կոմիտասի «Վաղարշապատի պար»-ը:

Հայ մշակույթին նվիրված հանդիսության գեղարվեստական բաժինը ավարտվում է ընդհանուր ու խանդավառ ծափողջույնների և սրտագին արտահայտությունների ներքո:

**Հոկտեմբերի 18-ին, երկուշաբթի օրը,** առավոտյան ժամը 11-ին, պատգամավորների-հյուրերի խումբը այցելում է Երևանի «Էրեբունի» ամրոցն ու թանգարանը:

* * *

## ՄԵԿՆՈՒՄ Տ. ՇՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

**Հոկտեմբերի 14-ին, երեքշաբթի օրը,** Թուրքիայի հայոց ամեն. **տ. Շնորհք սրբազան պատրիարքը** հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից ու պատվո ինքնաշարժերի ուղեկցությամբ մեկնում Լենինական, Կարսի վրայով, գնացքով, իր Աթոռը վերադառնալու համար:

Տ. Շնորհք պատրիարքին ուղեկցում էին իր շքաղմբի անդամները՝ տ. Թադեոս քհն. Տերողորմաճյանը և տ. Բարթող քհն. Բորքաճյանը:

Լենինականի քաղաքային կայարանում Թուրքիայի հայոց պատրիարքին դիմավորում է Շիրակի առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը, հոգևորականաց դասը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները և հավատացյալ հոծ բազմությունը:

Տ. Շնորհք պատրիարքն առաջնորդվում է Լենինականի ս. Աստվածածին եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով:

Տ. Մաշտոց եպիսկոպոսը, հանուն թեմի, բարի գալուստ է մաղթում սրբազան պատրիարքին, որը օրհնում է հավատացյալ ժողովրդին:

Այնուհետև, ի պատիվ սրբազան պատրիարքի, տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

Ժամը 16-ին սրբազան պատրիարքին ճանապարհում են դեպի Կարս տ. Մաշտոց եպիսկոպոսը, քահանայից դասը և պաշտոնական այլ անձինք:

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ՀՅՈՒՐԵՐԸ ՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՌՆՈՒՄ

Մայր Աթոռում եպիսկոպոսական ժողովի գումարումը սեպտեմբերի 27—հոկտեմբերի 2, սրբալույս մեռոնի օրհնությունը հոկտեմբերի 5-ին, Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի և գահակալության 14-ամյակի հանդիսությունները, ուխտագնացություններն ու այցելությունները անցնում են հաճելի, հետաքրքիր, բովանդակալից, հայրենասիրական և եկեղեցասիրական խոր ապրումներով, անմոռանալի տպավորություններով լեցուն, բայց արագ ու երազանման:

Մոտենում է հրաժեշտի ժամը:

Հոկտեմբերի 14—15 օրերը ծրագրում նշանակվել էին որպես պատգամավորների և հյուրերի հրաժեշտի և մեկնումի օրեր:

Պատգամավորները խումբ-խումբ այցելում են Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նրա օրհնություններն, ու հրաժեշտ են առնում՝ Մայր տաճարում իրենց վերջին աղոթքն ու ուխտը կատարելուց հետո և ապա մեկնում օդանավակայան ու ճանապարհվում Մայր Աթոռի միաբանության կողմից:

Հանդիսության օրերին, բոլոր այն պահերին, երբ պատգամավորներն ու հյուրերը պաշտոնական արարողություններից ազատ էին, ամեն հնարա-

վորություն ունեցան իրենց ազատ ժամանակն անցկացնելու շահեկան և հետաքրքրական այցելություններով և ուիտագնացությամբ դեպի մեր բազմադարյան հայրենիքի հնամյա ու նվիրական վանքերն ու եկեղեցիները, բնության հիասքանչ գեղեցկությունները, հայրենի տեսարժան քաղաքներն ու գյուղերը, մեր ուսումնական ու մշակութային հիմնարկներն ու հաստատությունները: Նրանք կարոտակեզ շրթներով, ծնրադիր համբուրում էին մեր սուրբ վանքերի մամռապատ քարերը, հիանում ս. Գեղարդի վանքի զարմանալի վիմափոր տաճարներով, զմայլվում սիրելի Սևանով, մշտաժպիտ Արագածով և Արարատով: Անսահման հպարտությամբ և երջանկությամբ ու հուզումներով էր համակվում նրանց հոգին հայրենիքի շքեղ վերելքի, Երևանի սրընթաց բարգավաճման, ժողովրդի օրավուր բարեփոխվող առօրյային ականատես լինելով: Մասնավորապես նրանց հոգեկան խորին հրճվանք էր պատճառում հայրենիքի հարուստ մշակութային կյանքը: Ո՞ր ճշմարիտ հայը, մանավանդ տարագիր պանդուխտ հայը, իրեն անհունորեն երջանիկ պիտի չզգա ի տես գիտական, ուսումնական և մշակութային բազմաթիվ այն հաստատությունների և նրանց մեջ կատարվող ստեղծագործական ու մեղվաջան աշխատանքի և այն վիթխարի նվաճումների, որոնք մեր փոքրիկ երկրին և մեր լավագույն մարդկանց համաշխարհային նոր ճանաչում ու փառք են բերում: Այցելելով գիտությունների ակադեմիան, պետական համալսարանը, բժշկական և այլ ինստիտուտներ, հանրային գրադարանը և, մանավանդ, պետական Մատենադարանը, թանգարանները, նրանց սիրտը լցվում էր խանդավառ զգացմունքներով և պայծառ լավատեսությամբ դեպի մեր տոհմիկ գիտության, գեղարվեստի և մշակույթի լուսաշող ապագան:

Պատգամավորներն ու հյուրերը ներկա եղան նաև օպերային և թատերական ներկայացումների, զանազան համերգների և ապրեցին գեղարվեստական խոր հաճույք՝ լավագույնս գնահատելով իրենց տեսածներն ու լսածները:

Պատգամավորներն ու հյուրերը զանազան առիթներով սիրալիր հանդիպումներ ունեցան հայրենիքի անվանի գիտնականների, արվեստագետների ու գրողների հետ: Այս հանդիպումները երջանկությամբ համակեցին նրանց հոգիները:

Հարգարժան պատգամավորները, հյուրերն ու ուխտավորները ներկա եղան Մայր Աթոռում կատարված բոլոր եկեղեցական ու հոբելյանական արարողություններին, բարձր գոհունակությամբ ականատես եղան և հաստատեցին Մայր Աթոռում ձեռք բերված նվաճումները շինարարական, վարչա-կազմակերպչական, ուսումնական, հոգևոր և բարոյական ասպարեզներում, Նորին Վեհափառության հոգեռանդ ջանասիրության, մշտարթուն հսկողության շնորհիվ: Բոլորն էլ այցելեցին հոգևոր ճեմարան, ծանոթացան դասախոսական կազմի և ուսանողության հետ, դիտեցին ննջարանները, ճաշարանը, հանգամանորեն հետաքրքրվեցին ճեմարանի ուսանողական և դաստիարակչական կյանքով, նրանց վարքով և կենցաղով: Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը պատվարժան պատգամավորների, հյուրերի և ուխտավորների վրա թողել է լավագույն տպավորություններ, և այնտեղ տարված աշխատանքը արժանացել է բոլորի գնահատանքին և քաջալերությանը:

Պատգամավորներն ու հյուրերը ծանոթացան նաև Մայր Աթոռի միաբանների հետ և նրանց կյանքին: Բոլորն էլ միահամուռ հաստատեցին նրանց նուանդուն աշխատասիրությունը, հավատարմությունն ու անձնվիրությունը՝ հանուն Մայր Աթոռի պայծառության և Հայաստանյայց եկեղեցու հաստատության:

Պատգամավորները մեծ գոհունակությամբ այցելեցին նաև Մայր Աթոռի տպարանը, ուր տնօրեն Մկրտիչ Մինասյանը բացատրություններ տվեց Մայր Աթոռի հրատարակությունների և տպարանի հետագա աշխատանքների մասին:

Պատգամավորները այցելեցին նույնպես Մայր Աթոռի տնտեսական բաժնի գրասենյակները, զրույց ունեցան բաժնի վարիչների և աշխատակիցների հետ, այցելեցին Մայր Աթոռի արհեստանոցները, պահեստները, իրենց գոհունակությունը հայտնեցին տիրող կարգ ու կանոնի, մաքրության, աշխատանքների կանոնավորության համար:

Պատգամավորները եղան նաև Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի խմբագրատանը և Մայր Աթոռի դիվանատանը:

Գահակալության առթիվ կազմակերպված բոլոր հանդիսություններն անցան խանդավառ և սրտառուչ իրադրության մեջ:

1969 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 15-ը խոշոր իրադարձությունների օրեր հանդիսացան մեր ազգային-եկեղեցական կյանքում:

Բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն այն է, որ երկա՜ր, երկա՜ր տարիներ Վեհափառ Հայրապետի սուրբ ձեռքերում ծաղկած մնա **«գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին, զի օրհնեսցուք զՔեզ, Տէր, այժմ և յաւիտեան»:**